

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Արարաթի» պատուարժան խմբագրութեան.

«Արարաթի» յունուարի տետրակում, 4 երեսի վրայ, տպագրուած են Ամենապատիւ Տ. Տեղակալի և Կովկասի Տ. Փոխարքայի միջև փոխանակուած հեռագրների թարգմանութիւնները: Առաջին հեռագրի հասցէն թարգմանուած է այսպէս. «ՆԱՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵՐՈՒԹԵԱՆ Կովկասեան Փոխարքայ գրաֆ վարոնցով-Դաշկովին»:

Պարտք եւմ համարում խմբագրութեանդ ուշադրութիւնը հրաւիրել այս տարօրինակ թարգմանութեան վրայ, որ ամենայն օր կրկնուում է հայոց պարբերական թերթերում: Ռուսն ասում է. Намѣстникъ Его Императорскаго Величества, այսինքն՝ Նորին Կայսերական Մեծութեան Փոխնորդ: Այս բառերի իմաստը մենք արտայայտում ենք մի բառով—Փոխարքայ, որ Նորին Կայսերական Մեծութեան բառերի հետ դառնում է մի անյարիր բան:

Ամենայն Հայոց Հայրապետը Երևանի Թեմակալ առաջնորդն է. Երևանում նստող Կաթողիկոսը, որ նորա փոխանորդն է, կոչւում է Փոխ-Թեմակալ: Արդ կարելի է ասել՝ Երևանի Թեմակալի Փոխ-Թեմակալ. Հնդկաստանի Փոխարքային ասուերէն ասում են вице-король. կարելի է ասել՝ вице-король короля англ. կամ индійск. Եթէ հարկաւոր լինէր վերջին բառերն արտասանել, պէտք կը լինէր անուշտ ասել՝ Намѣстникъ короля индійск. կամ англійск. և այն և ոչ вице-король короля. Մեր Փոխարքայ բառը այդ вице-король բառի թարգմանութիւնն է, որի հետ Ն. Կ. Մեծութեան բառերը դնելը միանգամայն անիրատւ բան է:

Յետոյ, չի լինի արգիւր «Կովկասեան» բառի տեղ գործածէք «Կովկասի», որ շատ աւելի համապատասխան է հայերէնի ոգուն, և «գրաֆի» տեղ «կամ», որ շատ վաղուց է մտած մեր լեզուի մէջ:

Յ. Յովհաննէսեան.

28 յունուարի 1912.